Գևորգյան ճեմարան
Էլ. - պարբերական

Gevorkian Seminary
E - Newsletter

Բ Տարի, թիվ 4
2016թ. Նոյեմբեր Ա

«Ամենայն գիրք աստուածաշունչք եւ օգտակարք ի վարդապետութիւն են՝ եւ ի յանդիմանութիւն, եւ յուղղութիւն, եւ ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ»

(Բ Տիմ. Գ 16-17):

Հոկտեմբերի 20-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի Տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի գլխավորությամբ տեղի ունեցավ գեղարվեստական խորհրդի երկրորդ նիստը, որի ընթացքում քննարկվեցին ամենաբազմազան բնույթի հարցեր, որոնք բոլորն էլ նպատակ ունեին մշակութապես զարգացնելու ճեմարանականներին: Այս անգամ գեղարվեստական խորհրդի կազմը ուներ համալրում՝ յանձինս ՀՀ արվեստ վաստակավոր գործիչ տիար Հարություն Թոփիկյանի և օրիորդ Կատարին Հովսեփյանի:

Ճեմարանական առօրյան

Հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ եղբայրական ֆուտբոլային հանդիպում Գևորգյան հոգևոր ճեմարանի և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի սաների միջև: Խաղն ավարտվեց 4:2 հաշվով՝ հօգուտ Գևորգյան հոգևոր ճեմարանի սաների:

Հոկտեմբերի 20-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի սաները մասնակցեցին խուլերի միջազգային օրվան նվիրված միջոցառմանը:

Հոկտեմբերի 23-ին Գյուտ Սբ. Խաչի տոնի օրը Գևորգյան հոգևոր ճեմարանի Զ լսարանի սաները Տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի գլխավորությամբ ուխտագնացություն կատարեցին դեպի Կոտայքի թեմի մի քանի եկեղեցիներ ու վանքեր: Ուխտավորների խմբին էր միացել Երևանի Իզմիրլյանի անվան հիվանդանոցի տնօրեն Արմեն Չարչյանը:

Այլ լուրեր

Հոկտեմբերի 24-ին և 26 Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքի համալսարանի դասախոս Ռեժինե Յունզինկերի դասախոսությունների շարքը՝ նվիրված Հին Կտակարանի մի քանի հետաքրքրական հատվածների քննարկմանը:

Հոկտեմբերի 25-ին Գևորգյան հոգևոր ճեմարան էր այցելել Անգլիկան եկեղեցու Գերմանիայի և Արևելյան Եվրոպայի փոխառաջնորդ Քոլին Ուիլիամսը: Ճեմարանի Տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համաբրձումյանի հետ հանդիպման ընթացքում քննարկեցին կրթական ծրագրերի շուրջ համագործակցության հեռանկարների վերաբերյալ մի քանի հարցեր:

Հոկտեմբերի 28-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի Արտաքին հարաբերությունների գրասենյակի պատասխանատու բրշ. Հարություն սրկ. Քեշիշյանը այցելեց Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, որտեղ հանդիպելով Թումոյի հարաբերությունների գրասենյակի պատասխանատուի հետ և միասին քննարկեցին երկու հաստատությունների միջև հնարավոր փոխհամագործակցության ծրագրեր:

Հովհան Ոսկեբերանի տոնը ճեմարանում

Հոկտեմբերի 29-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի Ա լսարանի սաները այցելեցին Էջմիածին քաղաքի պատմաազգագրական թանգարան, որտեղ ծանոթացան ազգային և մշակութային մի քանի հնագույն կոթողների հետ:

Հոկտեմբերի 29-ին Գևորգյան հոգևոր ճեմարան էր այցելել Արցախյան հերոսամարտի հերոս, Շուշի քաղաքի ազատագրման գլխավոր հրամանատար, գեներալ Արկադի Տեր-Թադևոսյանը: Վերջինս ճեմարանում հանդիպեց տեսչի, դասախոսների և ուսանողների հետ, պտտվեց ճեմարանում՝ ծանոթանալով ուսումնական հաստատության պատմությանը, կրթական և դաստիարակչական կյանքին:

Լրման վարդապետությունը

Ի՞նչ ենք հասկանում լրման վարդապետություն ասելով: Աստվածաշնչից գիտենք, որ Հիսուս Քրիստոս բազմիցս թե՛ ուղղակիորեն և թե՛ անուղղակիորեն իրեն նույնացրել է մարգարեների հիշատակած Մեսիայի հետ՝ միաժամանակ շեշտելով երկրի վրա օրենքը լրացնելու իր առաքելություն: Մատթեոսի Ավետարանում առկա Լեռան քարոզում ներկայացվում է օրենքի լրացման մի յուրօրինակ կառուցվածք. Հիսուս անդրադառնում է օրենքի մեջ գրված բոլոր հիմնական պատվիրաններին: Աստվածաշնչյան այս դրվագը ներկայացնում է լրման վարդապետությունը. առաջին՝ Հին Ուխտի լրացումը, բարեփոխումը Հիսուս Քրիստոսի կողմից և երկրորդ՝ մարգարեությունների լրումը: Այս իմաստով Եբրայեցիների թղթի բովանդակությունն ու կառուցվածքը լավագույնս համապատասխանում է թե՛ օրենքի լրման, թե՛ մարգարեությունների կատարման նշանակությանը:

Լրման վարդապետությունն իր ունեցած հիմնական նշանակություններով սերտորեն առնչվում է նաև Հին և Նոր Կտակարանների փոխհարաբերությանը: Խոսքը Հինկտակարանյան մարգարեությունների Նոր Կտակարանում իրականացման, լրման, մասին է: Լրման վարդապետության հաջորդ կարևոր և առանձնահատուկ կողմը Մեսիայի (Փրկչի, Օծյալի, Աստծո մարմնացած Որդու) կերպարն է: Կարելի է նշել, որ Մեսիայի գաղափարը լրման վարդապետության անձնավորումն է, այլ խոսքով՝ Մեսիան՝ իբրև որոշակի անձ, հստակեցնում է լրման վարդապետության համար չափազանց կարևոր Հին և Նոր Կտակարանների փոխհարաբերությունը: Մեսիայի գաղափարը հրեաների մեջ առաջացել է Եսայի մարգարեի ժամանակներից (Ք. ա. Թ-Ը դդ.), և նրա հետագա զարգացումը ծնունդ է տվել վախճանաբանական, խորհրդապաշտական և կրոնական շարժումների: Լրման վարդապետությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ Մեսիայի անձին: Ք. ա. Թ-Ը դարերից առաջ է գալիս Օծյալ թագավորի գաղափարը: Հրեական պատկերացումների մեջ այն Տիրոջ կողմից ընտրված և օծված մեկն էր, որի թագավորությունը տարածվելու էր աշխարհի բոլոր ժողովուրդների վրա: Սակայն, հետագայում այս գաղափարն աստիճանաբար ենթարկվել է փոփոխությունների: Մեսիայի կերպարը Իսրայելի թագավոր լինելու հատկությունից աստիճանաբար ձեռք է բերում տիեզերական թագավորի հատկություն (Եսայի Բ-Դ գլուխներ): Փոքր մարգարեների երկերում արդեն Մեսիան դառնում է հոգևոր օրենքի փոխանցողը:

Եբրայական ընկալման մեջ Մեսիան ունի մի քանի առանձնահատկություն՝ հոգևոր-օրենսդրական, պետական-թագավորական և միայն թագավորական: Քրիստոսի գալստյամբ Մեսիայի կերպարն իր լրումին է հասնում Հիսուսի՝ Աստծո Որդու անձի մեջ: Հրեաների պատկերացրած երեք ընկալումներից Քրիստոս միայն հոգևոր օրենսդրություն է հաստատում՝ իրեն հռչակելով երկրի վրա Աստծո արքայության հիմնադիր: Գործք Առաքելոցի առաջին գլուխներում մեջբերվում են մի քանի հինկտակարանյան մարգարեություններ, որտեղ Դավիթ սաղմոսերգուն վկայում է Քրիստոսի աստվածության մասին. «Նախապես Տիրոջը ամեն ժամ տեսնում էի իմ առաջ, որովհետև նա իմ աջում է, որպեսզի չսասանվեմ» (Գործք Բ 25): Մեկ այլ օրինակ է Պետրոս առաքյալի առաջին ընդհանրական նամակի Ա 12-րդ համարը, որտեղ ակնարկում է հուդայականության մահվան մասին. «Աստված նրանց (հրեաներին) հայտնեց նաև, որ ոչ թե իրենց համար, այլ մեզ համար էին տրված այդ պատգամները, որոնք այժմ պատմվեցին ձեզ նրանց միջոցով և ավետարանվեցին Սուրբ Հոգով, որն ուղարկվեց երկնքից. մի բան, որ կցանկանային հրեշտակները գոնե աղոտ կերպով տեսնել»: Նորկտակարանյան այս մոտեցումներն իրենց ավանդական արտահայտումը գտան նաև Բ և Գ դարերի տարբեր գրվածքներում: Սակայն, միայն Ի դարում «Լրման վարդապետությունը» ձեռք բերեց անհրաժեշտ տեսական-գիտական հիմնավորում: Այն հատկապես կարևոր էր հասկանալու համար հինկտակարանյան ուսումնասիրությունների նշանակությունը քրիստոնեական եկեղեցու համար:

Լրման վարդապետության միջոցով է, որ համայնքի ներսում ձևավորվում է հինկտակարանյան մարգարեական վկայությունների հանդեպ վերաբերմունքը: «Լրման վարդապետության» շնորհիվ է, որ քրիստոնեական համայնքներն ու եկեղեցիները կարողանում են սահմանել Հին Կտակարանի և հինկտակարանյան գրականության տեղն ու դերը Եկեղեցու կյանքում:

Պատրաստեց Արամայիս ուրկ. Սողբաթյանը

«Անառակ որդու» կտավը

Աստվածաշնչում կան կերպարներ, որոնք որոշ հեղինակների կողմից իրենց ուրույն տեղն են գտել արվեստի մեջ: Հեղինակներից մեկը՝ Ռեմբրանդ Հարմեսզոն վան Ռեյն է, որը ծնվել է 1606 թ. հուլիսի 15-ին, Լեյդենում: Նկարիչը անդրադարձել է աստվածաշնչային սակավ արծարծվող կերպարների, որոնց համապատասխանությունը Աստվածաշնչի տեքստին մինչև այժմ ճշտվում է: Իր ողջ կյանքի ընթացքում նա նկարել է 350 գեղանկար, ավելի քան 100 գծանկար և 300 օֆորտ: Գեղանկարչի որոշ գործեր կրոնական թեմայով են, որոնցից ամենամեծ կտավը «Անառակ որդու վերադարձը» գլուխգործոցն է: Նկարում պատկերված է առակի ավարտը, երբ տղան վերադառնում է տուն: Նկարի ձախ մասում՝ դեմքով դեպի հանդիսատեսը, պատկերված է ծնկի իջած անառակ որդին: Գլուխը պատկերված է «պրոֆիլ պերդու» ոճով: Նկարի մեջ գլխավոր միտքը արտացոլվում է լույսի միջոցով: Գալանավորի նման սափրած գլուխն ու ցնցոտիները վկայում են ճգնաժամի մասին: Օձիքը վկայում է երբեմնի շքեղության մասին, կոշիկները հնամաշ են, ընդ որում, կոշիկը դուրս է եկել ծնկի իջնելուց: Նկարում հոր և որդու կողքին պատկերված են ևս 4 կերպարներ, որոնք առեղծվածային են, ներկայացվում են ստվերների տեսքով և մթության մեջ դժվար են նկատվում: Էրմիտաժից մի արվեստաբան կարծում է, որ Ռեմբրանտի կտավն ունի իր նախատիպը՝ Կորնելիսա Անտոնիսսենայի փայտե փորագրության մեջ, որում ևս անառակ որդու և հոր կողքին պատկերված են կերպարներ: Փորագրության մեջ կերպարները մակագրված են Հույս, Հավատ, Սեր, Զղջում և Ճշմարտություն: Կտավի ռենտգենյան ուսումնասիրությունը ցույց տվեց նախնական համընկնումը նշված փորագրության հետ: Հետին պլանում նկատելի են ևս 2 կերպարներ: Կանացի կերպարը ամենայն հավանականությամբ աղախինն է: Ըստ առակի սյուժեի՝ նստած երիտասարդը հնազանդ որդին է: Սակայն կա ենթադրություն, որ եղբոր կերպարն իրականում նախորդ կանացի կերպարն է, որը գրկել է սյունը: Կա վարկած, որ դա ոչ թե սյուն է, այլ Երուսաղեմի տաճարի կոթողը: Նկարի աջ կողմում պատկերված է վերջին վկայի կերպարը: Նրա դեմքը արտահայտում է կարեկցանք, իսկ ճամփորդական վերարկուն և գավազանը բերում են այն մտքին, որ նա էլ անառակ որդու նման մենակյաց թափառական է: Մեկ այլ կարծիքի՝ նկարի աջ կողմում պատկերված երկու կերպարները հայրն ու որդին են, միայն թե մեկ այլ դրվագում: Այսպիսով՝ նկարը համատեղում է ժամանակագրական երկու դրվագներ: Նկարի աջ կողմում պատկերված վկայի կողքին կանգնած է ֆլեյտահարը: Շտությունը, ամենայն հավանականությամբ, խորհրդանշում է այն ուրախությունը, որը վայրկյաններ անց լինելու է հոր տանը: Տեսակետներից մեկի համաձայն՝ վերջին տարիներին պատկերված այս նկարում հեղինակը պատկերել է ինքն իրեն՝ մեղավոր որդու կերպարով:

Պատրաստեց Գիորգի դպ. Աբրամյանը

ՄԻՈՒԹԻՒՆ Ի ԿԱՐԵՒՈՐՍ, ԱՋԱՏՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԲԱՅԱԿԱՆՍ ԵՒ ՍԷՐ ՅԱՄԵՆԱՅՆԻ…

Լինել մոտ կամ հեռու
Աստծուն կախված է
մարդուց, քանի որ
Աստված ամենուր է:

Սբ. Հովհան Ոսկեբերան

Աստծո շնչով գրված Գիրքը

Քրիստոնյաները հավատում են, որ Սուրբ Գիրքն Աստծուց է ներշնչված: Դա է ապացուցում այն, որ հայ քրիստոնյաներիս համար Սուրբ Գիրքը հայալեզու թարգմանությունից սկսյալ անվանվում է «Աստվածաշունչ»: Սա մարդկանց դեպի փրկություն առաջնորդելու սահմանված գրքերի ամբողջություն է: Մարդկային ոչ մի գիրք չի կարող փրկության տանել, քանի որ փրկությունը մարդկանցից չի գալիս, այլ Աստված է այն տալիս: Ուրեմն՝ հիմնական հատկությունը, որով քրիստոնյան Ս. Գիրքը տարբերում է մնացած գրքերից՝ աստվածաշնչականությունն է, որը երբեմն անվանվում է ներշնչականություն, այսինքն՝ Աստծո կողմից ներշնչված: Որպես կանոն, այս հասկացությունները ընկալվում են այն իմաստով, որ սուրբգրային տեքստերի հեղինակ կարող ենք կոչել Աստծուն, իսկ տեքստը՝գրված Սբ. Հոգու ներգործությամբ, որը հայտնություն է վերևից: Բայց սա իրականում առաջ է բերում մի շարք հարցեր. օրինակ՝կարելի՞ է ընդունել, որ սուրբգրային տեքստը բառացի և անմիջական խոսքերի փոխանցումն է Աստծուց: Եթե ոչ՝այդ դեպքում տեքստում որն է պատկանում Աստծուն, և որը՝մարդուն: Իսկ եթե այո, ապա ինչպես հասկանանք այն, որ տարբեր հեղինակների մոտ տարբեր է լեզուն, ոճը, մշակույթը և շատ այլ բաներ: Այսպես՝ներշնչականության պատկերացումները շատ բազմազան են. ա) նախ պետք է ասել, որ անկրոն ու անհավատ մարդիկ ընդհանրապես չեն ընդունում, որ Ս. Գիրքը ներշնչված է Աստծո կողմից, այլ այն համարում են պարզապես մարդկային գրություն, և այդպես վարկաբեկում Աստծո խոսքը՝ Ս. Գիրքը, բ) ոմանք ընդունում են, թե Ս. Գիրքը մասամբ է ներշնչված Աստծո կողմից: Այս կերպով նրանք կարողանում են տալ իրենց սեփական, կամայական որոշումը և պնդել, թե Ս. Գրքի որ հատվածներն են ներշնչված, և որոնք՝ոչ, գ) ոմանք էլ կարծում էին, որ Ս. Գիրքը բառացի թելադրվել է վերևից՝ սուրբգրային հեղինակներին նմանեցնելով երաժշտական գործիքների, որոնց վրա Աստված նվագում է: Այսինքն՝ հեղինակների առանձնահատկությունները բացատրվում էր նրանով, որ տարբեր երաժշտական գործիքներ տարբեր ձայներ ունեն, թեև նվագողը մեկն է: Բայց ինչպես երևում է, սա հռետորական հնարք է, որով շեշտվում է Աստծո դերը տեքստի ստեղծման մեջ: Հատկապես առաջին դարերում քրիստոնյա ջատագով հայրերը, ընդունելով Ս. Գրքի ներշնչականության ճշմարտությունը, ցանկանում էին շեշտել Աստծո ներգործությունը և այն բացատրում էին որպես թելադրություն վերևից, որտեղ մարդու գործոնը կարելի է ասել չկա: Բայց հայտնի մի մոլոր ուսմունքի՝ մոնտանական վտանգի ժամանակ Եկեղեցին շատ արագ հրաժարվեց մի շարք պնդումներից ու համեմատություններից, որոնք հանդիպել էին ջատագովների մոտ, և հակառակ այդ ամենի, Եկեղեցին ասաց, որ թեև Ս. Գիրքը գրված է Սբ. Հոգու նորշնչումով, սակայն մարդը նույնպես ունի ակտիվ և գիտակից մասնակցություն: Ս. Գիրքը ճիշտ չի հասկացվի, եթե մենք չընդունենք նրա գրվելու և՛ աստվածային, և՛ մարդկային հեղինակությունը: Միևնույն ժամանակ բավարար չէ ասել, որ Ս. Գիրքը մասամբ Աստծո խոսք է, և մասամբ՝ մարդկային, այլ պետք է ասել, որ Ս. Գիրքը ամբողջապես Աստծո խոսք է և մարդու խոսք. «Սուրբ Հոգու միջոցով մեր հոր՝ Դավթի՝ քո ծառայի բերանով ասացիր. «ինչու խռովվեցին հեթանոսները, և ժողովուրդները սին բաների մասին խորհեցին»» /Գործք Դ 25/: Ինչպես որ Հիսուս մարդ դարձավ՝ ծնվելով երկրային կույսից, այդպես էլ Ս. Գիրքը եկավ մեզ մոտ իր երկրային հեղինակների մարդկային լեզվով: Այսպես՝Հիսուս Աստծո կենդանի Խոսքն է, Աստվածամարդ է, իսկ Ս. Գիրքը Աստծո գրված խոսքն է՝ աստվածամարդկային գրություն: Իրականում ոչ միայն դժվար է բացատրել ներշնչման մեխանիզմը, այլև՝ անհնար: Յուրաքանչյուր փորձ մեզ կտանի մի տեղ, որը մեր մտքի համար բաց չէ: Դ) Ըստ մեկ այլ մոտեցման, որն իհարկե թերի է, Աստված հայտնում է որևէ գաղափար, որևէ ճշմարտություն, իսկ հետո մարդիկ իրենց բառերով գրում են այն, ինչ իրենց հայտնվել է: Բնականաբար, այսպիսի մոտեցման դեպքում անհնար է լրջորեն խոսել հենց տեքստի աստվածաշնչականության մասին, այլ՝ միայն որոշ հայտնության, որը պատմության մեջ տեղի է ունեցել վաղուց: Այս տեսակետից Ս. Գիրքը չի տարբերվում որևէ ստեղծագործությունից, որը նվիրված է Աստծուն և հիմնված է իրական աստվածճանաչողության փորձի վրա: Պետք է նշել մի շատ կարևոր հանգամանք ևս, որ Սբ. Հոգու ներգործությունը պետք չէ համարել վաղուց տեղի ունեցած և մեզ հետ ուղղակի կապ չունեցող գործողություն: Իրականում ներշնչականությունը ընդգրկում է ողջ կրոնական համայնքը: Մենք գիտենք, որ Ս. Գիրքը ծնվել է Եկեղեցու ներսում, որտեղ և որոշվել է նրա սահմանները և մեկնության հիմնական սկզբունքները: Բավական երկար ժամանակ էր հարկավոր այս գործընթացի համար, և Սբ. Հոգին տարբեր փուլերում տարբեր կերպ է գործում: Ավելին՝ այս տեքստը ճիշտ հասկանալու համար այսօր անհրաժեշտ է նույն Սբ. Հոգու օգնությունը: Եվ ինչպես որ Սբ. Հոգին, պայծառացնելով սուրբգրային հեղինակների միտքը, թույլ չտվեց, որ նրանք մեղանչեն ճշմարտության առաջ, այդպես և մենք՝ Ս. Գիրք ընթերցելուց առաջ պետք է խնդրենք Աստծուն, որ լուսավորի մեր միտքը, որպեսզի չլինի, թե անզգամություն ցուցաբերենք և մեղանչենք ճշմարտության առաջ:

Պատրաստեց Հովհաննես ուրկ. Բալայանը

Իգնատիոս Բրյանչանինով
Ավետարանի ընթերցանության մասին

Ավետարանի ընթերցանության ժամանակ մի՛ փնտրիր վայելք, մի՛ փնտրիր բերկրանք, մի՛ փնտրիր փայլուն մտքեր: Փնտրի՛ր տեսնել անարատ և սուրբ ճշմարտությունը:

Մի՛ բավարարվիր միայն Ավետարանի անպտուղ ընթերցանությամբ, ջանա՛ կատարել նրա պատվիրանները, ընթերցի՛ր այն գործերով: Սա կյանքի գիրք է, և պետք է այն կարդալ կյանքով:

Մի՛ մտածիր, որ գրքերից անպատճառ ամենասուրբը՝ Քառավետարանը (չորս Ավետարանները) սկսվում է Մատթեոսի Ավետարանով և վերջանում՝ Հովհաննեսի Ավետարանով: Մատթեոսը առավելաբար ուսուցանում է, թե ինչպես կատարել Աստծո կամքը, և նրա խրատները հատկապես հարմար են Աստծո ճանապարհը սկսողների համար: Հովհաննեսը շարադրում է Աստծո՝ մարդու հետ միավորման կերպը՝ նորոգված պատվիրաններով, որ հասանելի է միայն Աստծո ճանապարհին առաջադիմածներին:

Երբ ընթերցելու համար բացում ես գիրքը՝ սուրբ Ավետարանը, հիշի՛ր, որ այն որոշում է քո հավիտենական վիճակը: Նրանով մենք պետք է դատվենք, և կախված այն բանից, թե ինչպես են եղել մեր հարաբերությունները նրա հետ, կստանանք մեր բաժինը՝ կա՛մ հավիտենական երանություն, կա՛մ հավիտենական պատիժ (Հովհ.ԺԲ 48):

Աստված բացեց Իր կամքը չնչին փոշեհատիկին՝ մարդուն: Գիրքը, որում շարադրված է այդ վեհ և ամենասուրբ կամքը՝ քո ձեռքերում է: Դու կարող ես ևՙ ընդունել, ևՙ մերժել Արարչի ու քո Փրկչի կամքը՝ նայած, թե ինչպես է քեզ հարմար: Քո հավիտենական կյանքն ու հավիտենական զգուշավոր ու խելամիտ է հարկավոր քեզ մահը քո ձեռքերում են: Տե՛ս, թե որքան հետ: լինել: Մի՛ խաղա քո հավիտենական վիճակի

Աղոթի՛ր Աստծուն փշրված հոգով, որպեսզի Նա բացի քո աչքերը՝ տեսնելու Իր օրենքում թաքնված հրաշալիքները («Բա՛ց իմ աչքերը, որ տեսնեմ քո օրենքի հրաշալիքները» (Սղմ. ՃԺԸ 18)), որը Ավետարանն է: Բացվում են աչքերը, և տեսանելի է դառնում Աստծո Խոսքով կատարվող հոգու մեղքից հրաշալի մաքրումը: Մարմնական ախտերի բժշկումը եղավ միայն ապացույց հոգու ապաքինման, ապացույց նաև մարմնավոր մարդկանց և զգայականությունից կուրացած մտքերի համար (Ղուկ. Ե 24):

Կարդա՛ Ավետարանը ծայրաստիճան երկյուղածությամբ և ուշադրությամբ: Ոչինչ մի՛ համարիր այնտեղ անկարևոր ու երկրորդական: Նրա յուրաքանչյուր հովտ արձակում է կյանքի շող: Կյանքի արհամարհանքը մահ է:

Կարդալով բորոտների, տկարների, կույրերի, կաղերի և դիվահարների մասին, որոնց բժշկեց Տերը՝ խորհի՛ր, որ քո հոգին, կրելով մեղքի բազմազան խոցերը և դևերի մոտ գերության մեջ գտնվելով, նման է այդ հիվանդներին: Սովորի՛ր Ավետարանից այն հավատը, որ Տերը ինչպես նրանց բժշկեց, քեզ նույնպես կբժշկի, եթե ջանասիրությամբ աղաչես Նրան քո բժշկության համար:

Չե՛ռք բեր այնպիսի հոգեվիճակ, որում ընդունակ լինես բժշկություն ստանալու: Այն ստանալու ընդունակ են նրանք, ովքեր գիտակցում են սեփական մեղավորությունը, ովքեր որոշել են թողնել իրենց մեղքերը: Հպարտ արդարին, այսինքն՝ սեփական մեղավորությունը չտեսնող մեղավորին, պետք չէ Փրկիչը, և Նա չի կարող օգնել այդպիսինին (Մատթ. Թ 13):

Մեղքերի տեսողությունը և տեսողությունն այն ընկած վիճակի, որում գտնվում է ողջ մարդկային ցեղը, Աստծո բացառիկ պարգևն է: Խնդրի՛ր քեզ համար այդ պարգևը, և հասկանալի կլինի Երկնավոր Բժշկի գիրքը՝ Ավետարանը:

Աշխատի՛ր, որ միտքդ և սիրտդ յուրացնեն Ավետարանը, որպեսզի միտքդ, այսպես ասած, լողա և ապրի նրա մեջ: Այն ժամանակ քո կյանքը նույնպես կդառնա Ավետարանին պատշաճ: Դրան կարելի է հասնել անդադար Ավետարանը երկյուղով ընթերցելով և սերտելով:

Մի՛ համարձակվիր ինքդ մեկնաբանել Ավետարանը և սրբազան գրականության մյուս գրքերը: Դրանք ասվել են սուրբ մարգարեների և առաքյալների կողմից, ասվել են ոչ թե կամայականորեն, այլ Սուրբ Հոգու ներշնչմամբ: «Մարգարեությունը ոչ թե ըստ մարդկանց կամքի տրվեց երբևէ, այլ Սուրբ Հոգուց մղված է, որ խոսեցին Աստծո սուրբ մարդիկ» (Բ Պետ. Ա 21):

Պատրաստեց Սամվել ուրկ. Պապիկյանը

Մեծերը Աստվածաշնչի մասին

Աստվածաշունչ մատյանը քրիստոնյային դեպի փրկություն առաջնորդող Ամենակարող Աստծո խոսքերի, օրենքների ու պատվիրանների ամբողջությունն է: Այն բացահայտում է Աստծո սրբությունն ու խորին խորհուրդները, նրա անհուն և բովանդակ սերն առ մարդն ու մարդկությունը:

Աստվածային սիրո մեծությունն ու Նրա խոսքի անառարկելի վսեմությունը ընդունում են մեծամեծ գիտնականներ, փիլիսոփաներ, ռազմական և պետական գործիչներ, գրողներ ու արվեստագետներ: Եվ ինչպես ուժգին քամուց հաստաբուն ծառերն են անգամ խոնարհվում, նույնպես և Աստծո խոսքի զորության առաջ հանճարներն են գալիս ծունկի՝ համաձայն մարգարեի բերանով ասված խոսքի, թե. *«Ամեն ծունկ Ինձ է խոնարհվելու, ամեն լեզու Աստծուն է խոստովանելու»* (Եսայի ԽԵ 23):

Աշխարհահռչակ գերմանացի բանաստեղծ Յոհան Վոլֆգանգ Գյոթեն Աստվածաշունչն է համարում ամեն տեսակ ուսուցումների և զարգացումների հիմքը՝ ասելով. *«Թող աշխարհն առաջադիմի և զարգանա որքան կուզի, թող մարդկային հետազոտությունների բոլոր բնագավառները և իմաստությունը հասնեն իրենց բարձրակետին, մեկ է չեն կարող փոխարինել Աստվածաշնչին»*:

Իսկ ռուս նշանավոր գիտնական Դմիտրի Մենդելեևը, արժևորելով Աստվածաշնչի ունեցած համաշխարհային նշանակությունը, նշում է, որ. *«Աստվածաշունչը ճշմարտության գիրք է, երբեք չցամաքող հոգևոր աղբյուր, որը հագեցրել է մեզանից առաջ ապրած միլիոնավոր մարդկանց հոգևոր ծարավը և շարունակում է բավարարել մարդկության հոգևոր կարիքները՝ ներկա և գալիք բոլոր դարերի հոլովույթում»*:

Ֆրանսիացի լուսավորիչ Ժան Ժակ Ռուսոն Աստվածաշունչն համարում է Աստծո ձեռքի գործը՝ խոստովանելով. *«Ավետարանի սրբությունը սրտիս հետ խոսող փաստարկ է…և որքա՜ն չնչին ու աննշան են մյուս բոլոր գրվածքները Սուրբ Գրքի համեմատ»*:

Ահա ուրիշ պատմական ու քաղաքական նշանակալի անձանց վկայություններ ևս.

«Աստվածաշունչը մեծագույն գիրքն է աշխարհում, քանի որ աշխարհին է բերում ամենակարևոր և բարի լուրը Հիսուս Քրիստոսի հարության մասին» (Բենջամին Ֆրանկլին):

«Աստվածաշունչը Աստծո կողմից մարդուն տրված ամենալավ նվերն է: Առանց այդ Գրքի անհնարին կլիներ զանազանել ճշմարտությունը կեղծիքից» (Աբրահամ Լինքոլն):

«Աստվածաշունչն է միակ գիրքը աշխարհում, որի մեջ կա ամեն ինչ, նաև քո բոլոր հարցերի պատասխանները» (Ալեքսանդր Պուշկին):

Իրենց կյանքով ու գործով մարդկության պատմության զարգացման ճանապարհին խորը հետք թողած անձանց այս խոսքերը գալիս են ևս մեկ անգամ փաստելու, թե որքա՜ն մեծ ու անփոխարինելի է Աստվածաշունչ մատյանի դերը մարդու կյանքում:

Պատրաստեց Գևորգ Կարապետյանը

Ասէ Աստուած

Այսպէս է ասում Տէրը. «Պահպանեցէ՛ք իրաւունքը եւ կատարեցէ՛ք արդարութիւնը, քանզի եկել հասել է իմ փրկութիւնը, եւ յայտնվելու է իմ ողորմությունը: (Եսայու 56: 1,2)

Արարչագործությունից ի վեր մարդու կյանքը մշտապես լի է եղել Աստծո հետ «հանդիպումներով», երբ Աստված ուղղակի կամ անուղակի կերպով իր կամքն է հայտնի դարձրել իր ընտրյալների ու իր սիրելիների միջոցով: Հին Կտակարանի մարգարեական գրականության մեջ հեղինակություն հաղորդելու համար մարգարեներն իրենց տրված հայտնությունից առաջ նշում են, որ Աստված է իրենց հետ խոսում (օր.՝ Եզեկ. ԺԳ 3) Հետևաբար, Աստծո կողմից պատգամի ստացումն է, որ ներշնչել է մարգարեներին ու Սուրբ Գրքի այլ հեղինակներին՝ խոսելու ու մարդկանց իրենց Արարչի պատգամները փոխանցելու համար:

Ամեն հավատացյալ և բարեպաշտ քրիստոնյայի համար իր կյանքի մեծագույն հաջողության ու բերկրանքի պահը Աստծո հետ հանդիպումն է՝ Նրա հետ հաղորդվելը: Մենք՝ քրիստոնյաներս, մեր կյանքը ապրում ենք Հիսուս Քրիստոսի խոսքի համաձայն. մշտարթուն կերպով ականջ ենք դնում նրա սուրբ Ավետարանի պատգամներին և այն ճշմարտապես կյանքի աղբյուր դարձնում մեր հոգու և մարմնի համար: Մայր եկեղեցին Տիրոջ խոսքը մեզ է հասցնում և կայուն եռանդով շարունակ Աստծո հետ հաղորդ դարձնում՝ դառնալով Տիրոջ հետ առանձնահատուկ հանդիպման վայր: Ծիսական արարողությունների ժամանակ սրբազան հայրերի ու սպասավորների բերանով հենց Տերն է խոսում մեզ հետ և այդ ձայնը երբեք չի լռում: Սրա լավագույն օրինակը ամեն անգամ սրբազան ծիսակատարությունների ժամանակ Ավետարանի ընթերցումից առաջ ժողովրդին ուղղված ազդարարումն ու կոչերն են. «Ալելուիա, օրթի՛, երկյուղածութեամբ լուարուք, պոռոսխումէ, *ասէ Աստուած…*»: Եվ բացի այդ, ընթերցման ժամանակ, հոգևորականը բարձր պահելով Ավետարանը ծածկում է իր երեսը, ի նշան այն բանի, որ ոչ թե ինքն է խոսում, այլ իր բերանով՝ Աստված: Հենց այս է պատճառը, որ մինչև ընթերցումը սարկավագի կողմից հորդորներ ենք ստանում՝ ոտքի կանգնելու, ուշադիր և երկյուղով պատրաստվելու Աստծո խոսքը լսելուն: Եվ նաև շատ կարևոր է Աստծո խոսքի ճշմարիտ ընկալումը, որը կատարվում է հոգևորականի կողմից պարզաբանելու և ուղղորդելու միջոցով:

Այսպիսով՝ առավել հստակ է դառնում այն, որ յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքը լիանում է Աստծո կենարար խոսքը լսելով և այն իր առօրյայում պահելով ու կենսագործելով: Իսկ ահա այդ խոսքը, որ մեր սրտի մեջ մտնելով իր առատ ծիլերն է տալիս, ի զորու է մեզ ամբողջապես փոխակերպելու, նոր մարդ դարձնելու ու կենդանի անոթներ Աստծո Սուրբ Հոգու: Աստծո ներկայությունը մեր կյանքում զգալու ամենից դյուրին միջոցը դառնում է իր իսկ խոսքի կենսագործումը մեր կյանքում, քանի որ «Աստված միայն *ասաց*, և ողջ աշխարը չգոյից ստեղծվեց»:

Պատրաստեց Սևակ ուրկ. Հակոբյանը

Ֆեյսբուքում մեզ կարող եք հետևել այստեղ՝
www.facebook.com/gevorgianseminary

Ձեր հարցերը կարող եք ուղղել մեզ հետևյալ էլ. հասցեով՝
gevorgianseminary@gmail.com

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գևորգյան հոգևոր ճեմարան
Հեռախոս՝ (010) 510 180